ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀՔԿ-ՄԱԱՊՁԲ-23/1

ք. Երևան «30» 03 2023թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Գնորդ)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Մայ Մարկետ>> ՍՊԸ-ը (այսուհետ՝ Վաճառող), ի դեմս տնօրեն Ս. Եսայանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 923 516 (ինը հարյուր քսաներեք հազար հինգ հարյուր տասնվեց) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի պայմանագրով նշված հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև. ապրանքի մատակարարումը պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված Կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել Կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի Կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման Կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ քաղաքաշինության կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն ՀՀ 900011011724, ՀՎՀՀ 02565827 Գլխավոր քարտուղար _____ Ա.Մկրտչյան (ստորագրություն) Կ.Տ.	«Մայ Մարկետ» ՍՊԸ ք. Երևան, Նոր-Նորք, Ս.Սաֆարյան 8/8 «ԱմերիաԲանկ» ՓԲԸ Հ/Հ 1570048536910100 ՀՎՀՀ 00184008 Տնօրեն _____ Ս. Եսայան (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
«30» 03 2023թ. կնքված
N ՀՀՔԿ-ՄԱԱՊՁԲ-23/1 գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի								մատակարարման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	ենթակա քանակը	Ժամկետը
1	30192930/1	ուղղիչ գրիչներ	Ուղղիչ գրիչ ծայրը՝ մետաղական, 7 մլ, գրչատիպ:	հատ	149	4470	30	30	2-րդ եռամսյակ 2023թ
2	30197231/1	թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ	Թափանցիկ պոլիմերային թաղանթ, A4 (210x297) ձևաչափի թղթերի համար, արագակարներին ամրացնելու հնարավորությունով: 50միկրոն:	հատ	9.5	57000	6000	3000	2-րդ եռամսյակ 2023թ
								3000	3-րդ եռամսյակ 2023թ
3	30197234/1	1-Թղթապանակ, կոշտ կազմով	Թղթապանակ կոշտ ստվարաթղթե կազմով, համապատասխան չափի կռնակով (ծավալով), **65 մմ** հաստությամբ, մետաղյա ամրացման հարմարանքով, A4 (210x297) մմ ձևաչափի թղթերի համար:	հատ	890	80100	90	51	2-րդ եռամսյակ 2023թ
								39	4-րդ եռամսյակ 2023թ
4	30197234/2	2-Թղթապանակ, կոշտ կազմով	Թղթապանակ կոշտ ստվարաթղթե կազմով, համապատասխան չափի կռնակով (ծավալով), **45 մմ** հաստությամբ, մետաղյա ամրացման հարմարանքով, A4 (210x297) մմ ձևաչափի թղթերի համար:	հատ	550	22000	40	40	2-րդ եռամսյակ 2023թ
5	30197230/1	1-թղթապանակ	Թղթապանակ արագակար (235x310) մմ չափերով, A4 ձևաչափի թղթերի համար, տարբեր գույների պլաստիկ կոշտ կազմով, համապատասխան չափի կռնակով (ծավալով) 1,5 սմ հաստությամբ (մետաղյա զսպանակով):	հատ	390	46800	120	120	2-րդ եռամսյակ 2023թ

6	30197230/2	2-թղթապանակ	Թղթապանակ արագակար (235x310) մմ չափերով, A4 ձևաչափի թղթերի համար, տարբեր գույների պլաստիկ կոշտ կազմով, համապատասխան չափի մետաղյա կռնակով (ծավալով) 3.5 սմ հաստությամբ	հատ	590	70800	120	60	2-րդ եռամսյակ 2023թ
								60	3-րդ եռամսյակ 2023թ
7	30197230/3	3-թղթապանակ	Թղթապանակ արագակար (235x310) մմ չափերով, A4 ձևաչափի թղթերի համար, տարբեր գույների պլաստիկ կոշտ կազմով, համապատասխան չափի մետաղյա կռնակով (ծավալով) առնվազն 1,5 սմ հաստությամբ:	հատ	340	13600	40	40	2-րդ եռամսյակ 2023թ
8	30197230/4	4-թղթապանակ	Թղթապանակ արագակար (235x310) մմ չափերով, A4 ձևաչափի թղթերի համար, տարբեր գույների պլաստիկ կոշտ կազմով, համապատասխան չափի կռնակով (ծավալով) 1.5 սմ հաստությամբ (մետաղյա ամրակով):	հատ	340	34000	100	100	2-րդ եռամսյակ 2023թ
9	30192740/1	Թուղթ գունավոր, A4 ֆորմատի	A4, չկավճած թուղթ, երկկողմանի տպագրման համար, գույնը դեղին, մեխանիկական եղանակով ստացված, 180 գ/մ², (210X297) մմ.:	կգ	1350	10125	7.5	7.5	2-րդ եռամսյակ 2023թ
10	22811180/1	Օրագրեր	Նշումների սեղանի գիրք՝ **2023** թվականի ամսաթվով, արհեստական կաշվով երեսպատված հաստ կազմով A5 (148x210մմ) ձևաչափի սյունակավորված թերթերով (թվով 160-170), նվազագույնը 356 էջ, հեռախոսահամարների, ֆաքսերի, էլեկտրոնային հասցեների (E-mail) և այլ տեղեկատվության համար նախատեսված:	հատ	1490	14900	10	10	1-ին եռամսյակ 2023թ
11	30192780/1	Էջաբաժանիչ	էջանիշ՝ կպչուն, հինգ գույնից բախկացած, 1-1,2 սմ լայնությամբ, 4-4,5 սմ երկարությամբ:	հատ	140	35000	250	250	2-րդ եռամսյակ 2023թ
12	30199420/1	թուղթ նշումների համար, սոսնձվածքով	Թուղթ նշումների համար, գունավոր, կպչուն, չափսերը՝ 7.5 x7.5 սմ, սոսնձվածքը 1,70 սմ:	հատ	149	44700	300	150	1-ին եռամսյակ 2023թ
								150	2-րդ եռամսյակ 2023թ
13	39263520/1	սեղմակ, միջին	Սեղմակ թղթերի համար, մետաղական, լայնությունը՝ 25 մմ:	հատ	17.5	8750	500	500	2-րդ եռամսյակ 2023թ
14	39263530/1	սեղմակ, մեծ	Սեղմակ թղթերի համար, մետաղական, լայնությունը 32 մմ:	հատ	20	20000	1000	500	2-րդ եռամսյակ 2023թ
								500	3-րդ եռամսյակ 2023թ

15	30197100/1	Կարիչի մետաղալարե կապեր, մեծ	Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր բլոկներով՝ 24.6 մմ, կամ 26.6 մմ:	տուփ	174	34800	200	66	1-ին եռամսյակ 2023թ
								100	2-րդ եռամսյակ 2023թ
								34	3-րդ եռամսյակ 2023թ
16	30197111/1	Կարիչի մետաղալարե կապեր, փոքր	Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր բլոկներով՝ 10 մմ/6 մմ:	տուփ	110	11000	100	50	1-ին եռամսյակ 2023թ
								50	2-րդ եռամսյակ 2023թ
17	30197323/1	կարիչ, 50-ից ավելի թերթի համար	Գրասենյակային կարիչ, 50-ից ավելի թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար:	հատ	3990	47880	12	12	2-րդ եռամսյակ 2023թ
18	30192128/1	գրիչ գելային	Գնդիկի ծայրը՝ 0.5 մմ, մեխանիզմը՝ ոչ ավտոմատ, փակիչով, թանաքի գույները՝ կապույտ, սև և կարմիր, հիմնական երկարությունը փակված վիճակում՝ 13-15սմ, գրելու ընթացքում առանց ընդհատումների: Գրիչների քանակը ըստ գույների համաձայնեցվում է Պատվիրատուի հետ:	հատ	99	42867	433	209	1-ին եռամսյակ 2023թ
								224	3-րդ եռամսյակ 2023թ
19	30192121/1	գրիչ գնդիկավոր	Գրիչ գնդիկավոր, մեխանիզմը՝ ոչ ավտոմատ, փակիչով, թանաքի գույները՝ կապույտ, սև և կարմիր, հիմնական երկարությունը փակված վիճակում՝ 13-15սմ, գրելու ընթացքում առանց ընդհատումների: Գրիչների քանակը ըստ գույների համաձայնեցվում է Պատվիրատուի հետ:	հատ	49	14994	306	306	1-ին եռամսյակ 2023թ
20	30192720/1	գծանշիչ	Նախատեսված բոլոր տեսակի թղթերի ընդգծման, նշումներ անելու համար, գրչածայրի ձևը՝ շեղ, տարբեր գույների, շարժական պատյանով: Գծանշիչի գույների ընտրությունը համաձայնեցվում է Պատվիրատուի հետ:	հատ	109	21800	200	100	2-րդ եռամսյակ 2023թ
								100	3-րդ եռամսյակ 2023թ
21	30192130/1	Մատիտներ	Նյութը՝ փայտ սև գրաֆիտ, սրված, առանց ջնջոցի, 2HB կարծրությամբ, բարձրորակ:	հատ	49	7350	150	150	2-րդ եռամսյակ 2023թ
22	22811150/1	նոթատետրեր	Նոթատետր A5 ֆորմատի, քառակուսի կամ տողանի, առնվազն 50 թերթ, 128x203սմ, պլաստիկ կամ մետաղյա պարույրով:	հատ	299	29900	100	50	1-ին եռամսյակ 2023թ
								50	2-րդ եռամսյակ 2023թ

23	30192125/1	Մարկերներ	Մարկերներ, նախատեսված մագնիսական գրատախտակի համար, հեշտ ջնջվում է՝ չթողնելով հետքեր, թանաքը արագ չորացող, տարբեր գույների: Մարկերների գույների ընտրությունը համաձայնեցվում է Պատվիրատուի հետ:	հատ	349	10470	30	10	1-ին եռամսյակ 2023թ
								10	2-րդ եռամսյակ 2023թ
								10	4րդ եռամսյակ 2023թ
24	30234400/1	դատարկ սկավառակ, առանց տուփի, DVD	Սկավառակ DVD-R /DVD-R 16X/, օրիգինալ, 4,7 ԳԲ հիշողությամբ ծավալով, 16X ձայնագրման արագությամբ	հատ	99	19800	200	200	2-րդ եռամսյակ 2023թ
25	39263200/1	գրասենյակային գիրք, մատյան, 70-200էջ, տողանի, սպիտակ էջերով	Գրանցամատյան գործավարության համար, թերթերի քանակը՝ 70, թերթի տեսակը՝ օվսեթային 80գ/մ^2:	հատ	499	7485	15	15	1-ին եռամսյակ 2023թ
26	30192230/1	Սկոչ՝ երկկողմանի սոսնձված	Երկկողմանի ինքնակպչուն ժապավեն՝ 24մմ լայնությամբ, 10 մ երկարությամբ, սպունգանման:	հատ	790	7900	10	10	2-րդ եռամսյակ 2023թ
27	30192231/1	Սկոչ՝ մեծ	Սկոչ՝ թափանցիկ ինքնակպչուն ժապավեն 48մմ լայնությամբ, 100մ երկարությամբ:	հատ	490	9800	20	20	2-րդ եռամսյակ 2023թ
28	30192710/1	Սոսնձամատիտ	Չոր սոսինձ՝ գրասենյակային (սոսնձամատիտ), թուղթ սոսնձելու համար, առնվազն 21գր.:	հատ	195	9750	50	25	1-ին եռամսյակ 2023թ
								25	3-րդ եռամսյակ 2023թ
29	39263420/1	Ամրակ 50մմ	Գրասենյակային ամրակներ, մետաղական, 50մմ չափի, թղթի տրցակները ամրացնելու համար:	հատ	265	39750	150	64	2-րդ եռամսյակ 2023թ
								52	3-րդ եռամսյակ 2023թ
								34	4-րդ եռամսյակ 2023թ
30	39263400/1	Ամրակ 33մմ	Գրասենյակային ամրակներ, մետաղական, 33մմ չափի, թղթի տրցակները ամրացնելու համար:	հատ	149	29800	200	200	2-րդ եռամսյակ 2023թ
31	30141200/1	հաշվասարք, գրասենյակային	Հաշվասարք՝ թվաբանական գործողություններ կատարող և մաթեմատիկական բանաձևեր հաշվող՝ նախատեսված գրասենյակային աշխատանքների համար, 12 կամ ավելի նիշանի, առնվազն 18x14 սմ չափերով, գործողությունները ցուցադրումով վահանակի վրա, ինքնալիցքավորվող:	հատ	3490	34900	10	5	1-ին եռամսյակ 2023թ
								5	2-րդ եռամսյակ 2023թ

32	39241210/1	Մկրատ	Մկրատ միջին, 18սմ երկարությամբ, չժանգոտող	հատ	695	13900	20	10	1-ին եռամսյակ 2023թ
								10	3-րդ եռամսյակ 2023թ
33	39292510/1	Քանոն	Ուղիղ քանոն՝ գծաբաժանումներով, երկարությունը 30 սմ, պլաստմասե:	հատ	245	12250	50	20	1-ին եռամսյակ 2023թ
								30	2-րդ եռամսյակ 2023թ
34	30237132/1	Արտաքին սարքերի միացման լարեր (usb)	Տպիչի USB լար առնվազն 3մ երկարությամբ, միացման ինտերֆեյսը 2. 0 կամ 3.0:	հատ	1995	9975	5	5	4-րդ եռամսյակ 2023թ
35	30234650/1	ֆլեշ հիշողություն, 32GB	USB ինտերֆեյսը՝ USB 3,0, հիշողությունը առնվազն 32GB:	հատ	5490	27450	5	5	4-րդ եռամսյակ 2023թ
36	30237411/1	մկնիկ, համակարգչային, լարով	Բազմաֆունկցիոնալ մկնիկ լարով USB 0-1200 dpi տեսակի ինտերֆեյսով և անիվով, լազերային կամ օպտիկական, 3 ստեղնով: Լարի երկարությունը՝ մեկ մետր: Գույնը համաձայնեցնել Պատվիրատուի հետ:	հատ	3490	17450	5	5	4-րդ եռամսյակ 2023թ

**Ապրանքները պետք է լինեն չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ:*
***Ապրանքների մատակարարումը կատարվում է Վաճառողի կողմից, ք.Երևան, Կառավարական տուն N3, 4-րդ հարկ հասցեով:*

ԳՆՈՐԴ

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011011724, ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Մայ Մարկետ» ՍՊԸ
ք. Երևան, Նոր-Նորք, Ս.Սաֆարյան 8/8
«ԱմերիաԲանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570048536910100
ՀՎՀՀ 00184008
Տնօրեն՝

_____ Ս.Եսայան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 2
«30» 03 2023թ. կնքված
N ՀՀՔԿ-ՄԱԱՊՁԲ-23/1 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	30192930/1	ուղղիչ գրիչներ				4470	4470	4470	4470	4470	4470	4470	4470	4470	4470
2	30197231/1	թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ				28500	28500	28500	57000	57000	57000	57000	57000	57000	57000
3	30197234/1	1-Թղթապանակ, կոշտ կազմով				40050	40050	40050	40050	40050	40050	80100	80100	80100	80100
4	30197234/2	2-Թղթապանակ, կոշտ կազմով				22000	22000	22000	22000	22000	22000	22000	22000	22000	22000
5	30197230/1	1-թղթապանակ				46800	46800	46800	46800	46800	46800	46800	46800	46800	46800
6	30197230/2	2-թղթապանակ				35400	35400	35400	70800	70800	70800	70800	70800	70800	70800
7	30197230/3	3-թղթապանակ				13600	13600	13600	13600	13600	13600	13600	13600	13600	13600
8	30197230/4	4-թղթապանակ				34000	34000	34000	34000	34000	34000	34000	34000	34000	34000
9	30192740/1	Թուղթ գունավոր, A4 ֆորմատի				10125	10125	10125	10125	10125	10125	10125	10125	10125	10125
10	22811180/1	Օրագրեր			14900	14900	14900	14900	14900	14900	14900	14900	14900	14900	14900
11	30192780/1	Էջաբաժանիչ				35000	35000	35000	35000	35000	35000	35000	35000	35000	35000

12	30199420/1	թուղթ նշումների համար, սոսնձվածքով			22350	44700	44700	44700	44700	44700	44700	44700	44700	44700	44700	44700
13	39263520/1	սեղմակ, միջին				8750	8750	8750	8750	8750	8750	8750	8750	8750	8750	8750
14	39263530/1	սեղմակ, մեծ				10000	10000	10000	20000	20000	20000	20000	20000	20000	20000	20000
15	30197100/1	Կարիչի մետաղալարե կապեր, մեծ			11484	28884	28884	28884	34800	34800	34800	34800	34800	34800	34800	34800
16	30197111/1	Կարիչի մետաղալարե կապեր, փոքր			5500	11000	11000	11000	11000	11000	11000	11000	11000	11000	11000	11000
17	30197323/1	կարիչ, 50-ից ավելի թերթի համար				47880	47880	47880	47880	47880	47880	47880	47880	47880	47880	47880
18	30192128/1	գրիչ գելային			20691	20691	20691	20691	42867	42867	42867	42867	42867	42867	42867	42867
19	30192121/1	գրիչ գնդիկավոր			14994	14994	14994	14994	14994	14994	14994	14994	14994	14994	14994	14994
20	30192720/1	գծանշիչ				10900	10900	10900	21800	21800	21800	21800	21800	21800	21800	21800
21	30192130/1	Մատիտներ				7350	7350	7350	7350	7350	7350	7350	7350	7350	7350	7350
22	22811150/1	նոթատետրեր			14950	29900	29900	29900	29900	29900	29900	29900	29900	29900	29900	29900
23	30192125/1	Մարկերներ			3490	6980	6980	6980	6980	6980	6980	10470	10470	10470	10470	10470
24	30234400/1	դատարկ սկավառակ, առանց տուփի, DVD				19800	19800	19800	19800	19800	19800	19800	19800	19800	19800	19800
25	39263200/1	գրասենյակային գիրք, մատյան, 70-200էջ, տողանի, սպիտակ էջերով			7485	7485	7485	7485	7485	7485	7485	7485	7485	7485	7485	7485
26	30192230/1	Սկոչ՝ երկկողմանի սոսնձված				7900	7900	7900	7900	7900	7900	7900	7900	7900	7900	7900
27	30192231/1	Սկոչ՝ մեծ				9800	9800	9800	9800	9800	9800	9800	9800	9800	9800	9800
28	30192710/1	Սոսնձամատիտ			4875	4875	4875	4875	9750	9750	9750	9750	9750	9750	9750	9750

29	39263420/1	Ամրակ 50մմ				16960	16960	16960	30740	30740	30740	39750	39750	39750	39750
30	39263400/1	Ամրակ 33մմ				29800	29800	29800	29800	29800	29800	29800	29800	29800	29800
31	30141200/1	հաշվասարք, գրասենյակային			17450	34900	34900	34900	34900	34900	34900	34900	34900	34900	34900
32	39241210/1	Մկրատ			6950	6950	6950	6950	13900	13900	13900	13900	13900	13900	13900
33	39292510/1	Քանոն			4900	12250	12250	12250	12250	12250	12250	12250	12250	12250	12250
34	30237132/1	Արտաքին սարքերի միացման լարեր (usb)										9975	9975	9975	9975
35	30234650/1	ֆլեշ հիշողություն, 32GB										27450	27450	27450	27450
36	30237411/1	մկնիկ, համակարգչային, լարով										17450	17450	17450	17450
	ԸՆԴԱՄԵՆԸ				147319	677594	677594	677594	816091	816091	816091	923516	923516	923516	923516

*Վճարման ենթակա գումարները նեկայացվում են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011011724, ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(անհրաժեշտության դեպքում)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Մայ Մարկետ» ՍՊԸ
ք. Երևան, Նոր-Նորք, Ս.Սաֆարյան 8/8
«ԱմերիաԲանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570048536910100
ՀՎՀՀ 00184008
Տնօրեն՝

_____ Ս. Եսայան
(անհրաժեշտության դեպքում)
Կ.Տ.

Հավելված N 3
«30» 03 2023թ. կնքված
N ՀՀՔԿ-ՄԱԱՊՁԲ-23/1 գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«30» 03 2023թ. կնքված
N ՀՀՔԿ-ՄԱԱՊՁԲ-23/1 գնման պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն